Ճանաչի՛ր ինքդ քեզ

# Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 17.01.2024թ. չորեքշաբթի թիվ 1-2 (1130-1131)

## Առաջին

«**Կրթություն**» շաբաթաթերթի 2024 թվականի **առաջին** համարը սկսենք **ինքնավստահ** խմբագրականով. որպեսզի ինքնվստահ լինեն մեր հետագա բոլոր հրապարակումները ողջ տարվա ընթացքում... Ժողովուրդն է ասում, չէ՞, *ինչպես տարին սկսես, այնպես էլ այն կշարունակվի*: Իսկ ինքնավստահություն պետք է մեզանից յուրաքանչյուրին եւ մեզ՝ մեր հավաքական էության մեջ: Ինչո՞ւ հենց **ինքնավստահություն**, որ առաջարկում ենք նաեւ որպես **տարվա նշանաբան**: Որովհետեւ մեր ժողովրդին դա՛ է պակասում ահա արդեն հազար տարի...

Յուրաքանչյուր հայ, կամ գոնե մեզանից շատերը, իբրեւ հանրագիտարանային ճշմարտություն, գիտեն, որ, ասենք, առաջինը մշակովի բույսերի ցանքսով զբաղվել են Հայկական Լեռնաշխարհի բնակիչները: Առաջինը ձին ընտելացրել, առաջինը մետաղը այստեղ են ձուլել: Ժամանակը բաժանել են օրերի, ամիսների, տարիների, առաջին հացը այստեղ են թխել: Անիվի գյուտը այստեղ են արել, աստղային երկինքն առաջինը այստեղ են դիտել... Էլ չշարունակենք. միշտ առաջինը, միշտ առաջինը... Բայց արի ու տես, որ որքան էլ պարզ ու անհերքելի, այս ճշմարտությունները մեր քաղքենուն զայրացրել են միշտ, եւ նա շարունակել է կարդալ, խոսել, մտածել ա՛յլ լեզուներով, իրեն համարել ա՛յլ մշակույթի կրող, լավագույն դեպքում՝ աշխարհաքաղաքացի, որ սովորություն ունի միշտ խորհուրդ տալ. «*Դա եղել է անցյալում, իսկ այսօ՞ր*»: Այս հարցը դիվային էություն ունի իր մեջ ամբարած, որ միանգամից անվստահության թույն է կաթեցնում մեր մտքի վրա ու կաշկանդում պարզ համեմատությամբ կրկին տեսնել, որ այսօր էլ, ինչպես միշտ, մենք մնում ենք նույնը՝ **միշտ առաջինը**...

**Էպոսը** ճշգրտորեն արտացոլում է տվյալ ժողովրդի հավաքական բնավորության առանձնահատկությունները: Որքան քաջ, այնքան միամիտ, որքան հզոր, այնքան անվստահ... Անպայման պիտի կողքից մեկը հուշի, որ **Դավիթը** իրեն թափ տա ու դուրս գա հորից: Անպայման այլազգի մի գիտնական պիտի հնարի *Ուրարտուն*, որ մենք մոռանանք *Արարատը*, կամ էլ այլազգին պիտի փորձի *հնդեվրոպական մայր լեզվի հայրենիքը* փնտրել **Հայկական Լեռնաշխարհում**, իսկ մեր պատմաբանները մեր պատմության հազարամյակները շարունակեն դիտել իբրեւ կազմավորմա՜ն ժամանակաշրջան ու մեր հայրենիքում տասնյակ անհասկանալի ժողովուրդներ, լեզուներ ու քաղաքակրթություններ հնարեն... Ինչ է թե հանկարծ մեզ չասեն **նացիոնալիստ**: Է՛, եղբայր, մեզ համար մի՞շտ է 1937 թվական... Այդ վախը դեռ չե՞նք հաղթահարել... Անցել է արդեն 87 տարի... Գոնե հիմա՛ դույզն-ինչ ինքնավստահություն ձեռք բերենք. գոնե օտա՛ր գիտնականների չափ փառաբանենք մեր հայրենիքը:

Այդ անվստահությունը չէ՞, արդյոք, պատճառը, որ հայը, ինչ երկրում էլ որ հայտնվի, բարվոք կյանք է ապահովում իր համար, թե տաղանդ ունի, դառնում է աշխարհահռչակ, իսկ իր հայրենիքում... Թույլ է տալիս, որ աղանդները գործեն, քրիստոնեության էությունը չըմբռնած օտարները իրեն քրիստոնեություն քարոզեն, աշխարհակալ թագավորությունների շարաններ ունեցած եւ իր հասարակության մեջ երբեւէ սոցիալական ընդգծված հակասություններ չունեցած հային քաղաքացիության դասեր տան կամ ամենաօրինակելի ընտանիքներին փորձեն տոգորել գենդերայի՜ն մտածողությամբ... Ի՛նչ է, մեզ միշտ Ձենով Օհաննե՞ր են պետք, որ թափ տանք մեզ ու մեր գիտակցության վրայից դեն նետենք օտարների փոշին ու մեր անվստահության ժանգը, որ ելնենք **ճգնաժամ** կոչված՝ ոմանց համար երանելի ճահճից եւ մեզ արժանի կյանքով ապրենք: Դրա համար մեզ ո՛չ դրամաշնորհ է պետք, ոչ էլ խորհուրդ. մեզ հերի՛ք է մեր մտքի ու բազկի ուժը: Մեզ միայն վստահությո՛ւնն է պակասում, հավա՛տը սեփական ուժերի հանդեպ...

Չերկարացնենք: Խոսքը որքան պարզ ու հասկանալի խնդրի է վերաբերում, նույնքան էլ կարող է լինել անսպառ: Ընթերցողն ինքը կդնի վերջակետ՝ ինքնավստահ շարժումով ծալելով «**Կրթության**» 2024 թվականի առաջին համարը եւ մտովի ելնելով անվստահության հորից դեպի **վստահ լավատեսություն ու աշխատանք**: Իսկ մենք կշարունակենք *Ձենով Օհանի մեր դերը* այնքան, որքան կկամենա **Աստված**:

***Գ.Մ.***











## ՀՀ վարչապետ Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆԻ շնորհավորական ուղերձը՝ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ



Սիրելի՛ ժողովուրդ, Հայաստանի Հանրապետության սիրելի՛ քաղաքացիներ,

2023 թվականը մեր աչքի առաջ ահա հալվում է, եւ 2024 թվականը րոպեներ անց մեր տները կմտնի ջերմեռանդ պատանու նման:

2023 թվականը նույնպես փակում ենք բարձր տնտեսական աճով, եւ նախ ուզում եմ շնորհակալություն հայտնել այն մարդկանց, ովքեր 2023 թվականին աշխատել են, ստեղծագործել աշխատանքի մեջ, ավելացված արժեք ստեղծել եւ վճարել օրենքով նախատեսված հարկերը:

Նախեւառաջ այդ մարդկանց շնորհիվ է, որ զինվորականների եւ ուսուցիչների աշխատավարձերը կրկնապատկելու հնարավորություն ենք ստացել եւ այսօր մեր երկրում 450-ից մինչեւ 500 հազար դրամ աշխատավարձով ուսուցիչներ ու շարքային կազմի զինվորականներ կան:

Աշխատող, աշխատանքի մեջ ստեղծագործող եւ օրենքով նախատեսված հարկերը վճարող մարդկանց շնորհիվ է, որ մենք կարողացել ենք Լեռնային Ղարաբաղից փախստական դարձած մեր քույրերի եւ եղբայրների առաջին անհրաժեշտության կարիքները հոգալ:

*շարունակությունը՝ էջ 2*

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը՝ Ամանորի առթիվ



Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ ի հայրենիս եւ ի սփյուռս,

Տարեմուտի այս երեկո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր սերն ու բարեմաղթանքերն ենք բերում ամենքիդ: Ամանորը սահմանագիծն է պատմություն դարձած օրերի եւ հուսառատ գալիքի:

Փրկչական 2024 թվականը դիմավորում ենք խոր մտահոգություններով, դիմավորում ենք ահռելի կորուստների անամոքելի ցավը մեր սրտում: Ծանր տարի ապրեցինք, սակայն Տիրոջն ապավինած՝ հույսով ու լավատեսությամբ ենք նայում մեր ազգի ապագային: Արցախի բռնազավթման եւ հայաթափման, Հայաստանի շուրջ ստեղծված լրջագույն իրավիճակով եւ առկա հիմնախնդիրներով հանդերձ՝ հաստատակամ պիտի հաղթահարենք դժվարությունները՝ ամուր պահելով նվիրումն ու սերը առ հայրենին եւ հավատը առ մեր Ամենակալ Տերը:

Սիրելիներ, ուրախության, թե նեղության պահերին մեր ժողովուրդը միշտ ապավինել է Աստծուն, միշտ ուժ ու զորություն առել Բարձրյալից՝ հավատքով, որ Աստված մեզ հետ է: Անտարակույս, մեր ժողովրդի հոգեւոր ներուժն ու ոգու ամրությունը մեզ պիտի առաջնորդեն վերհառնումի եւ հայոց կյանքի հաղթական վերընձյուղման: Մենք ժառանգներն ենք մի ազգի, որ տառապել ու չարչարվել է, բայց չի հանձնվել, ցեղասպանվել է, բայց չի կործանվել, սրատվել է, բայց չի մահացել:

*շարունակությունը՝ էջ 2*

# ՀՀ վարչապետ Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆԻ շնորհավորական ուղերձը՝ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ

*սկիզբը՝ էջ 1*

Աշխատող, աշխատանքի մեջ ստեղծագործող եւ օրենքով նախատեսված հարկերը վճարող մարդկանց շնորհիվ է, որ կարողացել ենք Երրորդ հանրապետության պատմության մեջ առաջին անգամ նվազագույն կենսաթոշակները համապատասխանեցնել նվազագույն պարենային զամբյուղին:

Աշխատող, աշխատանքի մեջ ստեղծագործող եւ օրենքով նախատեսված հարկերը վճարող մարդկանց շնորհիվ է, որ երրորդ տարին անընդմեջ հունվարի 1-ից կբարձրանա գիտաշխատողների աշխատավարձը:

Աշխատանքի մեջ ստեղծագործող, նոր գաղափարներ առաջ բերող, այդ գաղափարների իրագործման պատասխանատվությունից չվախեցող մարդկանց շնորհիվ է, որ 2018 թվականից ի վեր Հայաստանում 190 հազար աշխատատեղ է ստեղծվել:

Աշխատող, աշխատանքի մեջ ստեղծագործող եւ օրենքով նախատեսված հարկերը վճարող այդ մարդիկ արժանի են գովասանքի ու շնորհակալության, եւ հույս ունեմ, որ 2024 թվականի բերած ջերմեռանդությունը նոր լիցք, նոր ուժ, նոր գաղափարներ կհաղորդի նրանց:

Սիրելի՛ ժողովուրդ,

սիրելի՛ հայրենակիցներ,

Որպես Հայաստանի Հանրապետության վարչապետ՝ 6-րդ անգամ եմ Ամանորյա ուղերձով ձեզ դիմում: Եվ միասին անցած մեր այս ճանապարհին հետհայացքը ցավի, ափսոսանքի բայց եւ հպարտության զգացումներ է հարուցում: Ցավի եւ ափսոսանքի մասին շատ ենք խոսել եւ խոսում, բայց Ամանորյա այս երեկոյին ուզում եմ իմ խոնարհումն ու հպարտությունն արտահայտել բոլորիդ եւ յուրաքանչյուրիդ հասցեին, որ անտանելի բեռներ ունենալով մեր ուսերին, կարողացանք ու կարողանում ենք մեր պետությունը՝ Հայաստանի Հանրապետությունը տանել անկախության ու ինքնիշխանության ամրապնդման բարդագույն ճանապարհով:

Մեր անցած ճանապարհի մասին մտածելիս հասկանում եմ, որ այս պատմությունը սխալ եւ ճիշտ որոշումների ըմբռնումներից անդին է եւ մենք ընթանում ենք որքան էլ դաժան, բայցեւայնպես միակ հնարավոր ճանապարհով, որը մեզ հնարավորություն կտա պետություն ժառանգել մեր սերունդներին:

Այս ճանապարհի մեծ մասն անցել ենք, բայց առջեւում նոր փորձություններից ու դժվարություններից ապահովագրված չենք եւ մեզ հարկավոր է չսասանվել, չերկմտել անկախ պետություն ունենալուեւս այդ պետությունը մեր սերունդներին ժառանգելու մեր վճռականության մեջ:

Նաեւ ուզում եմ ներողություն խնդրել բոլորիցդ եւ յուրաքանչյուրիցդ, Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիներից, Լեռնային Ղարաբաղից փախստական դարձած մեր բոլոր քույրերից ու եղբայրներից այն ցավի համար, որ վերջին տարիներին ապրել եք: Ներողություն խնդրում եմ ոչ այն պատճառով, որ ձեր առաջ որեւէ հանցանք եմ գործել կամ թեկուզ մեկ ակնթարթ մոռացել ձեր առաջ ունեցած պատասխանատվությունն ու որեւէ պարտավորություն, այլ որովհետեւ գիտեմ, թե ինչ եք զգում եւ նույնը զգում եմ ես:

Բայց այս զգացումը որեւէ կերպ չի կարող սասանել պետության ղեկավարի իմ պարտքը, որից բխում է, որ իմ բոլոր որոշումներն ու գործողությունները պետք է բխեն Հայաստանի Հանրապետության պետական շահից: Այս է պատճառը, որ ես առաջնահերթ եմ համարում մեր տարածաշրջանում մեր հարեւանների հետ հարաբերությունների կարգավորման եւ խորացման բանաձեւեր գտնելը եւ շարունակելու եմ վճռականորեն ընթանալ այդ ճանապարհով՝ հանուն պետության, հանուն ապագայի, հանուն սերունդների: Պետության ղեկավարի պարտքից է բխում, որ անհոգնել ու անընդհատ կրկնեմ, որ մենք շատ բաներ պետք է ավելի ու ամբողջական հասկանանք, շատ բաներ պետք է նայենք ու վերանայենք՝ անշրջելիորեն հասկանալու համար, որ հայրենիքը պետությունն է:

Հայրենիքը պետությունն է: Սիրո՞ւմ ես հայրենիքդ, ուժեղացրո՛ւ պետությունդ:

Հայրենիքը պետությունն է: Սիրո՞ւմ ես հայրենիքդ, վճարի՛ր հարկերդ:

Հայրենիքը պետությունն է: Սիրո՞ւմ ես հայրենիքդ, բարելավի՛ր կրթությունդ:

Հայրենիքը պետությունն է: Սիրո՞ւմ ես հայրենիքդ, աշխատանքով կերտի՛ր քո ու քո երկրի բարեկեցությունը, հարստացիր եւ հարստացրու:

Սա է Հայաստանի Հանրապետության պետական շահը: Այն ուղենիշ ու առաջնորդող պետք է լինի բոլորիս համար եւ համոզված եմ՝ 2024 թվականը, այդ ջերմեռանդ պատանին, պետության ու պետական ըմբռնման խորհրդանիշ է դառնալու մեզ համար:

Սիրելի՛ ժողովուրդ,

սիրելի՛ հայրենակիցներ,

Լցրե՛ք բաժակները եւ հոտնկայս խմենք Հայաստանի Հանրապետության կենացը:

Փառք նահատակներին եւ կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը:

Կեցցե՛ Հայաստանի Հանրապետությունը:

Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը՝ Ամանորի առթիվ

*սկիզբը՝ էջ 1*

Արդարեւ, չի կարող ընդհատվել պատմությունը մի ժողովրդի, որի տարեգրությունը զարդարված է աստվածպաշտության եւ հայրենասիրության հրաշալի վկայություններով, ապրելու եւ արարելու անընդմիջելի տենչանքով: Փորձությունները հաճախ են պատահում ժողովուրդների կյանքում, սակայն դժվարին իրավիճակներից հաղթանակած են դուրս գալիս այն ազգերը, որոնք աննկուն են մնում ոգով ու առ Աստված հավատքով եւ արիաբար դիմակայում նեղություններին ու մարտահրավերներին: *«Տերը ապավենն է բոլոր նրանց, ովքեր հույսը դրել են Նրա վրա»,-* ասում է սաղմոսերգուն (17.31):

Արդ, սիրելինե՛ր, նոր տարում նորոգվենք հոգով ու մտքով, զորանանք հույսով, ինքնաքննությամբ անդրադառնանք մեր ընթացքին ու գործերին, սրբագրենք թերացումներն ու սայթաքումները, թույլ չտանք, որ ազգային կյանքում սերմանվի ատելություն ու պառակտում, արմատավորվի կործանարար հարմարվողականությունն ու անտարբերությունը: Ապրենք հավատքով զարդարուն կյանքով, միմյանց հանդեպ աստվածապատվեր սիրով, որպեսզի զգանք Աստծո շնորհաբեր ներկայությունը մեզանում: *«Մեր անձերը կառուցենք հավատի սրբությամբ, աղոթենք Սուրբ Հոգով, պահենք մենք մեզ Աստծու սիրով»,-* ինչպես հորդորում է առաքյալը (Հուդա 20-21): Միասնական լինենք Հայաստանում ու սփյուռքում եւ մեր համախումբ ջանքերը ծառայեցնենք հանուն համազգային շահերի պաշտպանության, հայրենյաց ու ազգի կյանքի նոր արշալույսի կերտման: Գիտակցենք, որ հայրենիքը այն միակ սրբազան վայրն է, որտեղ ամբարված են բոլոր ժամանակների հայ սերունդների աղոթքներն ու երազները, որտեղ շարունակ պիտի կերտվի հայոց ինքնությունը, եւ որի սրբազան հողից է հավետ ուժ առնելու հայ ժողովուրդը: Հոգածու սիրով շրջապատենք Արցախից բռնի տեղահանված մեր քույրերին ու եղբայրներին, նրանց մեջ առատացնենք հույսը, որ երբեք չմարի հայրենի Արցախ վերադարձի տեսիլքը, եւ զորեղ մնա հավատն առ Աստված: Աջակից լինենք կարիքավորներին ու նեղյալներին եւ Բարձրյալի օգնականությունը հայցենք անհայտ կորած եւ գերյալ մեր զավակներին ու նրանց ընտանիքներին:

Սուրբգրական պատգամի համաձայն՝ չմոռանանք բարեգործությունը եւ մեր ունեցած բարիքներին միմյանց մասնակից դարձնելը, քանզի այդպիսի՝ պատարագներն են հաճելի Աստծուն (հմմտ. Եբր. 13.16), եւ այս է ճանապարհը մեր ժողովրդի բարեպաշտ ու ապահով կյանքի, այս է ճանապարհը դարավոր ու նվիրական արժեքներով մեր ազգի եւ պետության լինելիության ու հարատեւության:

Սրտագինս աղոթենք, որ Երկնավոր Տերը խաղաղության մեջ պահի հայոց աշխարհը եւ ողջ մարդկությանը, Իր զորակցությամբ հույսի ու սիրո շնորհները եւ հաղթության պարգեւը սփռի վտանգների միջով անցնող մեր հայրենիքի ու համայն հայության կյանքին այսօր եւ միշտ եւ հավիտյան. ամեն:

Բարի, օրհնյալ Նոր տարի:




# ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի շնորհավորական ուղերձը՝ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան առթիվ



Սիրելի՛ հայրենակիցներ, կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի ոլորտների սիրելի՛ ներկայացուցիչներ, 2023 թվականը բարդ ու դժվարին ճանապարհ էր՝ լի բազում մարտահրավերներով, նոր փորձություններով, ցավալի կորուստներով: Սակայն, այդուհանդերձ, պետք է արձանագրել՝ բոլոր բարդությունները եւս մեկ անգամ եկան ապացուցելու, որ ամենաօրհասական պահերին անգամ մենք կարողանում ենք համախումբ ուժերով լուծումներ գտնել, լինել միասնական, հաղթահարել ճգնաժամերը եւ դրա արդյունքում տարվա ավարտին ավելի կայացած եւ ավելի ամուր ենք՝ որպես պետություն եւ հասարակություն:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության համակարգման ոլորտներում արձանագրված հաջողությունները միասնական աշխատանքի եւ համատեղ ջանքերի արդյունք են: Իսկ դրանք բազմաթիվ են. կառուցվում, վերակառուցվում եւ նորոգվում են բազմաթիվ դպրոցներ ու մանկապարտեզներ՝ ապահովելով անվտանգ եւ արդի պայմաններ մեր երեխաների ուսումնառության համար, վերափոխվում են կրթական ծրագրերը եւ մասնագիտական զարգացման համակարգերը՝ ապահովելու որակյալ կրթություն, աջակցելու եւ արժանապատիվ պայմաններ երաշխավորելու մանկավարժների եւ դասախոսների համար, մեր գիտնականները հաջողություններ են արձանագրում իրենց աշխատանքում՝ սերտացնելով կապերը միջազգային գործընկերների հետ, հետազոտություններն իրականացնելով արդիական սարքավորումներով հագեցած պայմաններում:

Անցնող տարում բազմաթիվ մշակութային եւ մարզական միջոցառումներ են իրականացվել մարզերում՝ ունենալով հազարավոր մասնակիցներ, բացվել են նոր երիտասարդական կենտրոններ՝ ապահովելով ինտելեկտուալ ժամանցի եւ ոչ ֆորմալ կրթության հնարավորությունները տարբեր բնակավայրերում: Տասնյակ հուշարձաններ ամրակայվել եւ վերականգնվել են: Մշակույթի ոլորտի զարգացման, պատմական ժառանգության պահպանման ուղղությամբ պետության ուշադրությունը տարեցտարի ավելանալու եւ ավելի տեսանելի է դառնալու:

Ողջ տարվա ընթացքում ապրել ենք սպորտային հաղթանակների եւ մեծ նվաճումների բերկրանքն ու ոգեւորությունը, որի համար շնորհակալ ենք մեր մարզիկներին եւ մարզիչներին: Մեր պետությունը համառություն եւ վստահություն ունեցավ նաեւ միջազգային մի քանի խոշոր մրցաշարեր պատվով անցկացնելու Հայաստանում՝ արժանանալով մարզաշխարհի բարձր գնահատանքին ու հիացմունքին: Այս քաղաքականությունը լինելու է շարունակական:

Անցնող տարում մեզ համար առաջնային դարձավ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցների կրթության եւ մասնագիտական գործունեության շարունակականության ապահովման խնդիրը: ՀՀ բոլոր կրթական հաստատություններն առաջին իսկ օրից սիրով բացեցին իրենց դռները սարսափելի դժվարությունների միջով անցած մեր ուսուցիչների, աշակերտների եւ ուսանողների առջեւ: Շնորհակալություն եմ հայտնում բոլոր մանկավարժներին ու սովորողներին դժվարին օրերին պետության կողքին լինելու, միմյանց աջակցելու, չհուսահատվելու, զուգահեռ նաեւ պետական քաղաքականությամբ նախատեսված ծրագրերին մասնակցության ուժ գտնելու եւ աշխատանքը բնականոն հունով շարունակելու համառ կամքի համար: ԼՂ-ից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին ամեն կերպ աջակցելու, նրանց իրավունքները պատշաճ իրացնելու բոլոր ջանքերը եւ պետական հոգածությունը շարունակվելու են նաեւ 2024-ին:

Հարգելի՛ հայրենակիցներ, կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի ոլորտների սիրելի՝ ներկայացուցիչներ, 2024 թվականը թող լինի պետականաշինության գործում յուրաքանչյուրիս դերի հստակ գիտակցման եւ արժեւորման, ստեղծագործ մտքի, արարումների եւ մեծ նվաճումների տարի: Միացյալ եւ համատեղ ուժերով մենք կարող ենք ավելին: Ուժ, կամք եւ համառություն բոլորիս: Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

## ԿԳՄՍ նախարարության հաշվետվությունը

# Հագեցած տարի, նոր ծրագրեր

Վարչապետ **Նիկոլ Փաշինյանն** այցելել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն` գերատեսչության 2023 թ. գործունեության վերաբերյալ հաշվետվությունը քննարկելու նպատակով: ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանը** եւ նախարարի տեղակալները ներկայացրել են իրենց համակարգման ոլորտներում իրականացված աշխատանքները, առաջնահերթություններն ու գերակայությունները` անդրադառնալով նաեւ նախատեսվող բարեփոխումներին:

Զեկուցվել է, որ նախորդ տարվա ընթացքում ընդունվել են ռազմավարական ոլորտային կարեւոր փաստաթղթեր` ՀՀ կրթության մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագրի իրականացման գործողությունների ծրագիրը, մշակույթի եւ սպորտի ոլորտների զարգացման ռազմավարությունները: Ստեղծվել է ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեն, որի հիմնական նպատակը բարձրագույն կրթության եւ գիտության ինտեգրումն է:

Հանրակրթության ոլորտում **2023** թ. աշխատանքներն իրականացվել են **3** հիմնական ուղղություններով` բովանդակության կատարելագործում, մանկավարժների մասնագիտական զարգացում, ենթակառուցվածքների բարելավում: Նշվել է, որ նախադպրոցական կրթության պետական նոր չափորոշիչը ներդրվել է **190** հաստատություններում. վերապատրաստվել են շուրջ **1500** մանկավարժներ, ներդրվել է տարակարգի շնորհման համակարգը: Նախադպրոցական համակարգում ամբողջությամբ ներդրվել է համընդհանուր ներառական կրթությունը, ներկայում մանկապարտեզ է հաճախում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող **1255** երեխա` **2022** թ. **229** երեխայի փոխարեն: Նրանց կրթության ապահովման համար անհրաժեշտ միջոցները տրամադրվել են պետական բյուջեից, սեպտեմբերից այս խմբին միացել են նաեւ զինծառայողների երեխաները: *«Նախադպրոցական կրթության մասին»* օրենքում փոփոխություն է կատարվել, համաձայն որի` մինչեւ **2024** թ.-ի **հունիսի 1-ը** բոլոր գործող տնօրենները պետք է հավաստագրվեն, այլապես չեն կարողանա պաշտոնավարել: 2023 թ.-ին հավաստագրմանը մասնակցել է **263** անձ:

Հանրակրթության պետական նոր չափորոշիչի ներդրման աշխատանքներն իրականացվել են հանրապետության բոլոր դպրոցների **2-րդ, 5-րդ, 7-րդ** դասարաններում: Նոր մոտեցմամբ է իրականացվել դասագրքերի ստեղծումն ու տպագրումը, ինչը բարելավել է դասագրքերի որակը` միաժամանակ ընդլայնելով մասնակցության հնարավորությունները: Դասագրքերի ստեղծման նոր համակարգն ազդել է նաեւ գնի վրա. միջինում մեկ դասագրքի հաշվարկով տարրական դպրոցում` **1044** դրամից **742** դրամ, միջին դպրոցում` **1722** դրամից **1249** դրամ:

Վարչապետ Փաշինյանը շեշտել է, որ կրթական քաղաքականությունն ամենակարեւորներից է, որը մշակում եւ վարում է Կառավարությունը. *«Մենք պետք է վստահ լինենք, որ մեր դասագրքերը տալիս են հստակ ուղերձներ, որոնք պետք է լինեն պետականակենտրոն, պետության մասին, պետության պատմության մասին: Այդտեղ էլ շատ մեծ ամպլիտուդ կա, եւ պետք է շատ ուշադիր լինել: Մենք, առանց սեթեւեթելու, պետք է դա ասենք եւ ասում ենք` պետք է լինի պետականակենտրոն բովանդակություն: Դպրոցը պետական ինստիտուտ է, եւ ամեն ինչը բացարձակապես պետք է համապատասխանի պետականության ամրապնդման գաղափարին»:*

Ուսուցիչների մասնագիտական զարգացման եւ խրախուսման շրջանակում շարունակվել է ուսուցիչների կամավոր ատեստավորումը. 2023 թ. կամավոր ատեստավորմանը մասնակցել է մոտ **4200** ուսուցիչ:



Ընդհանուր առմամբ, գործընթացի ներդրման երեք տարիների ընթացքում ատեստավորվել է **3830** ուսուցիչ, որոնք վարձատրվում են բարձրացված` **200.000** դրամ դրույքաչափով, եւ ըստ ցուցաբերած արդյունքների, ստանում հավելավճար` **30-50 %:** Առաջին անգամ իրականացվել է նաեւ արտադպրոցական մանկավարժների կամավոր ատեստավորումը, որի արդյունքում ատեստավորված **44** մասնագետներն ստանում են լրավճար:

Խոսելով ատեստավորման գործընթացի կարեւորության մասին` վարչապետը նշել է. *«Գիտելիքի եւ բովանդակության խորքն է շատ կարեւոր: Կներե՛ք, անգիր արած տեքստն ուրիշ է, տեքստին տիրապետելն` ուրիշ: Ի՞նչն է խնդիրը: Հասկանո՞ւմ եք, երբ կրթության ոլորտի մարդիկ ասում են` գիտեք ինչ, եկեք այս **3** հարցին պատասխանեմ, այն **50** հարցը թեմայի հետ կապ չունի, գուցե ճիշտ է, բայց ինչ-որ բան կա, մեզ համար դիսկոմֆորտ կա, որովհետեւ մենք ուզում ենք գիտելիքի խորքն իմանալ: Մենք աշակերտի համար ենք դա անում: Աշակերտներ կան, հույս ունենք, որ կշատանան այդ աշակերտները, որոնք այդ շրջանակի մեջ չեն, իրենք ընկալում են եւ այնպիսի հարցեր են տալիս: Ես կարծում եմ, որ դա մեծ ողբերգություն է եւ մեծ դեմոտիվացիա է աշակերտի համար, եթե ինքը հարց է տալիս ուսուցչին եւ հասկանում է, որ ուսուցիչը բացարձակապես գաղափար չունի իր տված հարցի հետ: Ոչ ոք ամեն ինչ չի կարող իմանալ, բայց դասի ընթացքում մտքի աշխատանք պետք է տեղի ունենա, եւ այն, ինչ չգիտես, պետք է նաեւ դա իմանաս, թե ոնց հարաբերվես: Եվ այստեղ գիտելիքի խորքի խնդիր կա»:*

Նախարար Ժաննա Անդրեասյանը նշել է, որ ավելի վաղ կարծել է, թե դասվարներից ոչ ոք թեստային աշխատանքից չի կտրվի. *«Փաստը ցույց տվեց, որ չէ, **1-4-րդ** դասարանների դասվարներ կան, որ կտրվում են: Այդտեղ մտածում ես` առարկայի ծրագրի ի՞նչ հարցեր պետք է տրվեն, որ ուսուցչի համար բարդ լինի պատասխանելը»:*

Արձագանքելով վարչապետը հավելել է. *«Հասկանո՞ւմ եք` դա ինչ է նշանակում: Մեր տարրական դպրոցի ուսուցիչն ատեստավորումից կտրվում է: Իմ խնդիրը ոչ ուսուցիչն է, ոչ կտրվելը, իմ խնդիրը երեխան է: Ի՞նչ ենք անում, երեխայի ապագայի վրա ի՞նչ ազդեցություն ենք ունենում նման անպատասխանատվությամբ»:*

Նախարարի խոսքով` փաստը մնում է փաստ, որ կամավոր ատեստավորումը ախտորոշում է ուսուցիչների հետ կապված խնդիրները, որքան էլ դա դուր չգա: Ժաննա Անդրեասյանի խոսքով` ատեստավորմանը չմասնակցելու դիմադրությունը նաեւ հենց դրանով է պայմանավորված:

Միաժամանակ նշվել է, որ ուսուցիչների խրախուսման մյուս համակարգը տարակարգն է: Նախորդ տարի **101** ուսուցիչների շնորհվել է տարակարգ. առաջին անգամ ունենք նաեւ **4-րդ** աստիճանի տարակարգ ստացած ուսուցիչներ, որոնց աշխատավարձը **50%**-ով բարձրացել է:

Ի պատասխան վարչապետի հարցին` նախարար Ժաննա Անդրեասյանը նշել է, կամավոր ատեստավորման գործընթացի շրջանակում ստուգվում է ուսուցիչների` առարկայի իմացության մակարդակը: *«Այսինքն` դա բացառապես տվյալ առարկայի իմացությունը ստուգող թեստ է: Բայց բացի դրանից, որպեսզի համարենք, որ ուսուցիչը լավ ուսուցիչ է, պետք է հասկանանք, թե ինչքանով է ճիշտ պլանավորում դասը, ինչ մանկավարժական մեթոդներ է կիրառում, ինչպես է հետադարձ կապ ապահովում երեխաների հետ դասարանում: Տարակարգը կարծես երկրորդ կտորն է ծածկում: Դրա համար մենք ինչո՞ւ փոխեցինք կարգը: Նախկինում, որպեսզի տարակարգ տային, ուզում էին ուսուցչի ստացած շնորհակալագրերը, պատվոգրերը, ինչ-որ փաստաթղթային բաներ, կամ հոդվածներ, որոնք երբեմն տպագրվում էին ինչ-որ անհասկանալի ամսագրերում: Մենք հիմա ուսուցիչներից ուզում ենք իրենց անցկացրած դասերի տեսագրությունը, որ տեսնենք, թե ինչպես է ուսուցիչը դաս անցկացնում, ինչքանով է տեխնոլոգիաներ կիրառում, ինչքանով է երեխաներին ընդգրկում դասի մեջ, արդյոք կենտրոնանում է մեկ-երկուսի վրա, թե ամբողջ դասարանը մասնակցում է: Ուզում ենք իր դասի պլանները, այսինքն` օրինակ, ֆիզիկայից պիտի թեման բացատրի, ինչպես է պլանավորել, ինչ հերթականությամբ, ինչ տրամաբանությամբ»,-* մանրամասներ է ներկայացրել Ժաննա Անդրեասյանը:

Արձագանքելով վարչապետը նշել է. *«Մենք տարակարգ ստանալու բովանդակությունը, ըստ էության, փոխել ենք: Այսինքն` մանկավարժական մեթոդների եւ դասավարման պրոցեսի հետ ենք կապել եւ տեսանյութերով դա ստուգելի է, թե ոնց են ստանում տարակարգ»:*

2023 թ. ներդրվել է ուսուցիչների աշխատավարձի բարձրացմանն ուղղված երկու այլ ծրագիր եւս` բնագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչների **25%** հավելավճարի տրամադրումը, որի շրջանակում շուրջ **8420** ուսուցչի աշխատավարձը բարձրացել է 1 ուսուցչի հաշվով միջինում **32 000** դրամով եւ մինչեւ 100 սովորող ունեցող գյուղական դպրոցների ուսուցիչների խրախուսում, որի շրջանակում գյուղական մինչեւ 100 սովորող ունեցող դպրոցներում դասավանդող **3987** ուսուցչից **2975** ուսուցչի աշխատավարձի ավելացում է եղել **0,5** դրույքի չափով` միջինում 1 ուսուցչի հաշվով **71 700** դրամից դարձել է **115.300** դրամ:

Հանրակրթական դպրոցների կառավարման նոր համակարգը ներդրվել է **170** դպրոցում, որոնց տնօրենների պաշտոնավարման ժամկետը լրացել է 2023 թ.-ին: Կառավարման նոր համակարգի անցած դպրոցներում կրթության բովանդակային եւ վարչատնտեսական գործառույթների կառավարումն առանձնացված է:

Սեպտեմբերից դպրոցներում ներդրվել է ֆինանսավորման նոր մոդել, որի համաձայն` նախկինում գործող երեխա-թվով ֆինանսավորումից անցում է կատարվել դասարան-թվով ֆինանսավորման, ինչն, ըստ պատասխանատուների, թույլ է տալիս առավել լավ պլանավորել ուսումնական գործընթացը: Նոր ֆինանսավորմամբ նպատակային տողեր են առանձնացված նաեւ միջավայրի մատչելիության, խելամիտ հարմարեցումների, լաբորատոր նյութերի եւ այլնի համար: Ֆինանսավորման նոր մոդելով ուսուցչի **22** ժամ դրույքաչափը նոր չափորոշիչի ներդրվող դասարաններում հաշվարկում է տարրական դպրոցում **18** ժամ, միջին եւ ավագ դպրոցներում` **20** ժամ:

Մարզերում դպրոցների տարրական դասարանների բոլոր սովորողները` **135 հազար** աշակերտներ, օգտվում են *«Դպրոցական սնունդ»* ծրագրից; Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում **2025** թվականից Երեւանի դպրոցներում եւս ծրագիրը ներդնելու ուղղությամբ:

Շարունակվել է Կառավարության ***«300 դպրոց-500 մանկապարտեզ»*** ծրագրի իրականացումը: Հաստատվել է ծրագրում ընդգրկված **293** դպրոցների ցանկը, դպրոցների մեծ մասի շինարարությունը կմեկնարկի **2024** թ. տարեսկզբին: **2023** թ. ավարտվել են **29** դպրոցների եւ **114** մանկապարտեզների շինարարական աշխատանքները: Նոր կառուցված **29** դպրոցի մարզադահլիճի եւ **24** դպրոցի համար հատկացվել է գույք: ԲՏճՄ լաբորատորիաներով են համալրվել Արմավիրի մարզի **88** դպրոցներ եւ բոլոր նորակառույց դպրոցները:

Վարչապետը նշել է, որ պետք է մոնիթորինգ իրականացվի բոլոր ծրագրերի արդյունքները գնահատելու համար: *«Ծրագիր ընդունեցինք, պետք է մոնիթորինգ անենք, վերադառնանք բացարձակապես բոլոր ծրագրերին: Կառավարության նիստում էլ ասացի` մենք ֆինանսավորում ենք, այդ փողը ինչի` համար ենք տալիս: Փողը որոշակի քաղաքական նպատակի տրանսպորտային միջոց է, մենք ուզում ենք այդ նպատակը հասցնել տեղ: Պետք է գնանք, տեսնենք մեր նպատակը տեղ հասե՞լ է, թե տեղ չի հասել: Ի վերջո, ո՞րն է մեր նպատակը: Մեր նպատակն աշակերտն է, աշակերտին դրանից լա՞վ է, թե՞ վատ: Եթե պարզվի, որ աշակերտին դրանից լավ է, իսկ լավն ու վատը որոշվում է չափորոշիչով: Դա էլ է լավ, որ մենք գիտենք, թե ինչն է լավ, ինչն է վատ: Այսինքն, եթե գնում ենք տեսնում լավ է, շարունակենք, եթե տեսնում ենք լավ չէ, մտածենք, թե ինչ անենք»:*

Արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության ոլորտում Կառավարության կողմից հաստատվել եւ ԱԺ քննարկմանն է ներկայացվել *«Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին»* օրենքի նախագիծը, որի ընդունումը հնարավորություն կտա բարձրացնելու մասնագիտական կրթության որակը: **13** հաստատություններում ընթանում են շինարարական աշխատանքներ, **7**-ը համալրվել են նոր գույքով:

Գերակա մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրության բարձրացման նպատակով վերանայվել է կրթաթոշակային քաղաքականությունը. գյուղատնտեսության, արդյունաբերության եւ շինարարության ուղղություններով սովորող ուսանողներին հատկացվել է **50 հազար** դրամ կրթաթոշակ, որն ուղղակի ազդեցություն է ունեցել ընդունելության ցուցանիշների վրա:

*շարունակությունը` էջ 4*

# Հագեցած տարի, նոր ծրագրեր

*սկիզբը` էջ 3*

Շեշտվել է, որ գիտության եւ բարձրագույն կրթության ոլորտում ամենակարեւոր աշխատանքն ***«Ակադեմիական քաղաք»*** ծրագրի հայեցակարգի հաստատումն ու *«Ակադեմիական քաղաք»* հիմնադրամի ստեղծումն է:

Ժամանակակից արվեստի եւ գրահրատարակչության բնագավառում հաշվետու տարում ներդրվել է թատերահամերգային կազմակերպությունների ֆինանսավորման նոր մոդելը, որը պիլոտային ռեժիմով կիրականացվի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում եւ Հովհ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում: Հաստատվել է թատերահամերգային կազմակերպությունների ստեղծագործական անձնակազմի մասնագիտական որակավորման քննություններ անցկացնելու օրինակելի կանոնակարգը` սահմանվել են ելույթավճարների սկզբունքները: Օպերային թատրոնում արդեն իսկ կիրառվող ելույթավճարների նոր մոդելի արդյունքում` նվագախմբի երաժշտի միջին ամսական աշխատավարձը կազմում է **333 000** դրամ, որից ելույթավճարը` **103 000** դրամ, աշխատավարձը` **230 000** դրամ: Աշխատավարձերն Օպերային թատրոնում նախորդ տարի աճել են **40** տոկոսով:

Փոփոխություն է կատարվել *«Կինեմատոգրաֆիայի մասին»* ՀՀ օրենքում, որի արդյունքում` կիրառվելու է ներդրումների մասնակի վերադարձի (cash rebate) համակարգը: Կինոյի ոլորտի եւ կինոյի արտադրության զարգացմանը մեծապես նպաստել է նաեւ ճանաչված եւ հեղինակավոր կինոարտադրողների հետ համագործակցությունը: Մասնավորապես, հուշագիր է ստորագրվել *«Փիփլ օֆ Ար»* ընկերության հետ, համագործակցություն է նախանշվում նաեւ *«Նեթֆլիքս»*-ի հետ: *«Ամերիկացին»* լիամետրաժ կինոնկարն ընդգրկվել է *«Օսկարի»* շորտ լիստում (ռեժիսոր` Միքայել Գուրջյան):

2023 թվականին **9** թատերահամերգային կազմակերպության հատկացվել է **507 միլիոն 977 հազար** դրամ` գույքի եւ նյութատեխնիկական բազայի բարելավման նպատակով: Մշակույթի ապակենտրոնացման եւ մարզերի մշակութային կյանքի ակտիվացման նպատակով անցկացվել են փառատոններ (ՖեստիՎառ, Սայաթ-Նովա, Զարկ ֆեստ), մշակութային տարբեր միջոցառումներ սահմանամերձ շրջաններում, միջհամայնքային համատեղ նախաձեռնություններ, արտերկրի արվեստագետների համերգներ մարզերում:

2023-ին իրականացվել է **18** կրթականմշակութային նախագիծ, որում ընդգրկված են եղել **550** դպրոց, **21.000** աշակերտ, իրականացվել է ներառական **5** ծրագիր` **1800** մասնակցով:

**Ներսես Շնորհալու** մահվան **850**-րդ (գիտաժողով, ցուցադրություն եւ հանդիսավոր համերգներ, այդ թվում` Հունաստանում, Վատիկանում) տարելիցը եւ **Հայ կինոյի 100**-ամյակը ներառվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի հոբելյանական տարեթվերի ցանկում: Անցկացվել են **Արամ Խաչատրյանի 120**-ամյակին նվիրված խաչատրյանական ծրագիրը (**65** համերգ, **12** երկրում, ցուցահանդեսներ եւ գիտաժողովներ), Հայ կինոյի 100-ամյակին նվիրված ծրագիրը (**17-ից** ավելի միջոցառում): 2024 թ. կարեւոր հոբելյանական միջոցառումներից են` **Շառլ Ազնավուրի, Սերգեյ Փարաջանովի 100**-ամյա հոբելյանները, որոնք ներառված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի այս տարվա հոբելյանական ցանկերում:

Մշակութային ժառանգության ոլորտում ընդունվել է *«Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին»* ՀՀ օրենքի եւ հարակից մի շարք այլ օրենքների փոփոխության փաթեթը: Ազգային ժողով է ներկայացվել *«Թանգարանների մասին» օրենքի»* նախագիծը:

Թանգարաններում ներդրվել է տոմսերի նոր սակագնային փաթեթ, **մինչեւ 12** տարեկան երեխաների համար սահմանվել է անվճար մուտք: Դպրոցական բաժանորդային ծրագրից 2023 թ. ընդհանուր առմամբ օգտվել է **205 707** աշակերտ: Մշակութային արժեքների արտահանումը կազմակերպվում է գործարկված ՀՀ արտաքին առեւտրի ազգային մեկ պատուհան էլեկտրոնային հարթակում (**www.trade.gov.am**): Ստեղծվել է *«Արտաշատ Մայրաքաղաք»* պատմամշակութային արգելոցը, ներդրման առաջին փուլում է նախարարության ենթակայության թանգարանների միասնական էլեկտրոնային տոմսային համակարգը: Վերականգնվել է ՀՀ թանգարանային ֆոնդի համալրման նպատակով բյուջետային միջոցների տրամադրումը` **44 միլիոն 320 հազար** դրամ, հագեցվել է *«Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն»* ՊՈԱԿ-ի, նախարարության ենթակայության գրադարանների ու թանգարանների նյութատեխնիկական բազան: Վերանորոգվել են **Մինաս Ավետիսյանի** եւ **Գեւորգ Գրիգորյանի (ՋՈՏՏՈՅԻ)** թանգարանները, մեկնարկել են **Հովհաննես Թումանյանի** թանգարանի վերանորոգման աշխատանքները:

**14**-ով համալրվել է ոչ նյութական մշակութային ժառանգության անհապաղ պաշտպանության կարիք ունեցող արժեքների ցանկը: Իրականացվել են **11** ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության դրամաշնորհային ծրագրեր **50** համայնքներում եւ Ջավախքում: 2023 թ.-ին իրականացվել են **8** հուշարձանի վերականգնման աշխատանքներ, մշակվել են հուշարձանների տարածքներում տեղեկատվական կենտրոնների նախագծային փաստաթղթերը, որոնցից **3**-ը 2024 թ. կտեղադրվեն: Նորահայտ հուշարձանի կարգավիճակ է տրվել պատմամշակութային արժեք ներկայացնող **36** կառույցի, հաստատվել է **82** պահպանական գոտու նախագիծ, տրվել է **55** հուշարձանի հնագիտական ուսումնասիրության թույլտվություն, պետություն-մասնավոր համագործակցության շրջանակում վերականգնվել կամ վերականգնման ընթացքում է **10** հուշարձան:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերում են գրանցվել ***«Գյումրիի դարբնության ավանդույթը»*, Կոմիտասի ստեղծագործությունների հավաքածուն,** հավանության է արժանացել ***«Տաթեւի եւ Տաթեւի Անապատ վանական համալիրները եւ Որոտանի հովտի հարակից տարածքները»*** հուշարձանին ուժեղացված պաշտպանության կարգավիճակ շնորհելու վերաբերյալ ՀՀ ներկայացրած հայտը:

Շարունակվել է համագործակցությունը ՄԱԿ-ի, Եվրոպական միության, Եվրոպայի Խորհրդի, ԱՊՀ, ԵԱՏՄ, Ֆրանկոֆոնիայի եւ այլ կառույցների շրջանակում. հիշարժան են մշակույթի ոլորտում *«Ստեղծագործ Եվրոպա»*, կրթության ոլորտում *«Էրազմուս+»* եւ գիտության ոլորտում *«Հորիզոն Եվրոպա»* շրջանակային ծրագրերը ԵՄ հետ: Հաստատվել է Եվրոպայի Միության կողմից *«Հայաստանում ԵՄ աջակցությունը կրթությանը»* բյուջետային աջակցության ծրագիրը (**32 միլիոն** եվրո):

Զեկուցվել է, որ 2023-2024 ուսումնական տարում ՀՀ բուհերում սովորող օտարերկրյա ու սփյուռքահայ ուսանողների ընդհանուր թիվն աճել է **8.4%**- ով` կազմելով **8333** ուսանող, որից **4229**-ը` սփյուռքահայ (այդ թվում` պետպատվերով սովորող **330** սփյուռքահայեր): ՀՀ քոլեջներում, ուսումնարաններում սովորում է **563** օտարերկրյա քաղաքացի, որից **532**-ը` սփյուռքահայ (**2%** աճ): Մշակվել է ՀՀ բուհեր օտարերկրյա քաղաքացիների փաստաթղթերի ընդունելության եւ հաշվառման էլեկտրոնային հարթակը, որի շահագործումը նախատեսվում է 2024-2025 ուստարում: Լրամշակվում է 2011 թվականից գործող օտարերկրացիների ընդունելության կարգը:



ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ օտարերկրյա պետություններում հայերենի եւ հայագիտական առարկաների դասավանդման ծրագիրն իրականացվել է **13** պետությունների **15** գիտակրթական հաստատություններում, որոնցից **2**-ը ծրագրում ընդգրկվել են 2023-ին (Թրակիայի Դեմոկրիտ համալսարան (Հունաստան), Սինալոայի համալսարանի (Մեքսիկա)): Հաստատվել է *«Համագործակցության ցանցային հայագիտական համալսարանի ձեւավորման եւ զարգացման հայեցակարգը»:*

Կազմակերպվել է սփյուռքի կրթօջախների ուսուցիչների կարողությունների հզորացում ծրագիրը, որն անցկացվել է **7** ծրագրային ուղղություններով` **120** ժամ տեւողությամբ: **23** երկրի **220** կրթօջախի տրամադրվել է **38570** կտոր ուսումնական նյութ, որից **21970**-ը` **57%**-ը Վրաստանին: Ձեւավորվել է սփյուռքի դպրոցների ուսումնական նյութերի էլեկտրոնային շտեմարանը` **https://lib.armedu.am/category/67**, որն աստիճանաբար համալրվում է նոր դասագրքերով եւ նյութերով:

2023 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ երիտասարդության ոլորտում ընդհանուր իրականացվել է **25** ծրագիր` **2 միլիարդ 190 միլիոն** դրամի: Մեկնարկել են *«Երիտասարդության մասին»* օրենքի եւ երիտասարդության ազգային ինդեքսի մշակման աշխատանքները: Գավառը ճանաչվել է 2024թ. երիտասարդական մայրաքաղաք: Պետական միջոցներով ստեղծվել են երկու երիտասարդական կենտրոններ` Տավուշի մարզի Դիլիջան եւ Արագածոտնի մարզի Ապարան համայնքներում: Իրականացվել են կարողությունների զարգացման **9** ծրագրեր: 2023թ. *«Երիտասարդ ընտանիքին` մատչելի բնակարան»* ծրագրի շահառու է դարձել եւս **733** ընտանիք, որոնք պետական սուբսիդավորմամբ ձեռք են բերել բնակարան, որից **179**-ը Երեւանից, **554**-ը` մարզերից: Ընդհանուր առմամբ` 2010 թ-ի ծրագրի մեկնարկից ի վեր շահառուների ընդհանուր թիվը կազմել է **8140:**

2023-ին **35** մարզական ֆեդերացիաներին Կառավարության կողմից հատկացվել է **1 միլիարդ 755 միլիոն 300 հազար** դրամ: Ֆեդերացիաներն անցկացրել են **98** ՀՀ առաջնություն, մասնակցել են **213** միջազգային մրցաշարերի, այդ թվում` Եվրոպայի եւ աշխարհի առաջնությունների, կազմակերպել են **169** ուսումնամարզական հավաքներ (տարբեր տարիքային խմբերով):

Նախորդ տարվա ընթացքում տարբեր տարիքային խմբերի Եվրոպայի եւ աշխարհի առաջնություններում, համաշխարհային ունիվերսիադայում, եվրոպական, ԱՊՀ, Ֆրանկոֆոնյան խաղերում ՀՀ հավաքականների մարզիկները նվաճել են **445** մեդալ (որից **25**-ը կանայք), այդ թվում` **125** ոսկե, **127** արծաթե եւ **193** բրոնզե:

*«Փարիզ 2024»* ամառային օլիմպիական խաղերին լավագույնս նախապատրաստվելու նպատակով 2023 թվականին սպորտային նպաստ է ստացել **94** մարզիկ, **72** անձնական մարզիչ, **32** գլխավոր եւ ավագ մարզիչ, **13** բժիշկ եւ մերսող: ՀՀ կառավարության տարբեր ծրագրերով 2023թ. **64** մարզիկ եւ մարզիչ ստանում են մինչեւ **500.000** դրամ, **24** մարզիկ եւ մարզիչ` **500.000-1 միլիոն** դրամ, **2** մարզիկ` **1 միլիոնից** ավելի ամսական նպաստ եւ անվանական թոշակ: **70** մարզիկ ստացել է տարեվերջյան մինչեւ **500.000** դրամ միանվագ պարգեւատրում, **45** մարզիկ` **մինչեւ 1 միլիոն** դրամ, **91** մարզիկ` **1 միլիոն** դրամից ավելի: Տարվա արդյունքներով ձեքբերումների եւ նվաճումների համար **1** մարզիկ ստացել է ընդհանուր **18 միլիոն** դրամ: 2023 թ. **10** լավագույն մարզիկները պարգեւատրվել են` յուրաքանչյուրը **5 միլիոն** դրամով: 2023 թվականին ամսական պատվոճար են ստացել տարբեր տարիներին բարձր արդյունքներ ցուցաբերած **79** մարզիկներ: Տարեվերջյան միանվագ պարգեւատրում են ստացել **15** մարզաձեւից **205** մարզիկ, նրանց մարզիչները եւ մեծահասակների հավաքականների բժիշկները: 2022 թվականին բարձր արդյունքներ ցուցաբերած ՀՀ հավաքականների **130** մարզիկներին, նրանց անձնական **112** եւ հավաքականների **40** մարզիչներին նշանակվել է անվանական թոշակ` 2023 թ. հունվարի 1-ից:

Նախորդ տարվա ընթացքում ՀՀ-ում անցկացվել են **5** խոշոր մրցաշարեր. ապրիլի 15-23-ը ծանրամարտի մեծահասակների Եվրոպայի առաջնությունը, որին մասնակցել են **40** երկրի **600** մասնակիցներ (Հայաստանի հավաքականը նվաճել է **13** մեդալ` **4** ոսկե, **4** արծաթե եւ **5** բրոնզե): Ապրիլի 23-ից մինչեւ մայիսի 4-ը Երեւանում տեղի է ունեցել բռնցքամարտի երիտասարդների Եվրոպայի առաջնությունը, որին մասնակցել են **39** երկրի **350** մասնակիցներ (երիտասարդների Հայաստանի հավաքականը նվաճել է **13** մեդալ` **1** ոսկե, **2** արծաթե եւ **10** բրոնզե): Նոյեմբերի 10-12-ն անցկացվել է սամբոյի մեծահասակների Աշխարհի առաջնությունը, որին մասնակցել են **71** երկրի **700** մասնակիցներ (Հայաստանի հավաքականը նվաճել է **10** մեդալ` **5** արծաթ, **5** բրոնզ): Նոյեմբերի 12-ին` սպորտային պարերի աշխարհի երիտասարդների լատինամերիկյան առաջնությունը, որին մասնակցել են **33** երկրի **120** մասնակցել: Նոյեմբերի 21-ից դեկտեմբերի 5-ն անցկացվել է բռնցքամարտի պատանիների աշխարհի առաջնությունը, որին մասնակցել են **52** երկրի **450** բռնցքամարտիկներ (Հայաստանի հավաքականը նվաճել է **10** մեդալ` **4** ոսկե, **5** արծաթե, **1** բրոնզե):

ՀՀ կառավարության որոշմամբ` **61** մարզական կազմակերպություններին հատկացվել է **29** անվանում մարզական գույք: Շարունակվել է Արթուր Ալեքսանյանի անվան մարզադպրոցի կառուցումը, ինչպես նաեւ Գյումրու Մանկապատանեկան համալիր մարզադպրոցի, Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի մարզական համալիրի կառուցման աշխատանքները: Ավարտվել է Երեւանի թենիսի եւ բադմինթոնի մանկապատանեկան մարզադպրոցի վերանորոգումը, Սիմոն Մարտիրոսյանի անվան մարզադպրոցի կառուցման աշխատանքներն ավարտական փուլում են: Հեծանվային սպորտի եւ Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության եւ ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցների կառուցման աշխատանքները նախատեսվում է ավարտել 2024 թվականին: Երեւանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի մարզադահլիճներում իրականացվում են ուժեղացման աշխատանքներ:

*շարունակությունը` էջ 5*

Հոգեւոր

# Հայրապետական Սուրբ Պատարագ Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնի առթիվ

Հունվարի 6-ին՝ մեր **Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան** եւ **Աստվածհայտնության** տոնի առթիվ, **Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ** Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սուրբ Պատարագ մատուցեց Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում:

Հայրապետական խաչվառազարդ թափորը *«Խորհուրդ խորին»* շարականի հանդիսավոր երգեցողության ներքո Ամենայն Հայոց Կաթողիկոսին Սուրբ Տրդատի մատուռից առաջնորդեց դեպի Սուրբ Խորան:

Սուրբ Պատարագին որպես առընթերականեր սպասավորում էին Մայր Աթոռի լուսարարապետ Գերաշնորհ **Տեր Մուշեղ եպիսկոպոս Բաբայանն** ու ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան եւ Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Գերաշնորհ **Տեր Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը:**

Սուրբ Պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը ***«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»*** հրեշտակաբարբառ ավետիսով ողջունեց աշխարհասփյուռ հայությանը եւ տոնի առիթով հղեց իր պատգամը:



## Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պատգամը՝ Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի առթիվ

***Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:***

***«Հիմա լույս էք ի Տէր. ընթացեք ինչպես լուսո որդիներ. քանզի լուսո պտուղներն են բարությունը, արդարությունը եւ ճշմարտությունը»* (Եփ. 5.8-9):**

Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ,

Այսօր՝ Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնին, ազգս հայոց, թեեւ վշտակիր եւ հոգեխռով, սակայն հավատքով աներեր, կամքով անկոտրում եւ հույսով առլեցուն, խոնարհվում է մանկացյալ Փրկչի առջեւ, որ բեթղեհեմյան այրից որպես լույս ու փրկություն ճառագեց ողջ աշխարհին: Գեղեցիկ օրհներգությամբ է հոգեպարար շարականը մեզ փոխանցում Սուրբ Ծննդյան հիասքանչ իրողությունը. *«Աստվածածին, լույսի խորան, արդարության Արեգակի արեւելք եղար եւ խավարի մեջ նստածներիս լույս ծագեցրիր»:* Փրկչի Ծնունդը հրավեր է խավարից դեպի լույս, դեպի Աստված ընթանալու եւ միշտ Տիրոջ հետ լինելով՝ արժանի դառնալու երկնատուր բարիքների ու հավիտենության: Մարդեղացյալ Աստվածորդուն մերժելը, սակայն, արհավիրքներ է բերում, չարիք ու ավեր սփռում: Սուրբ Ծնունդը այսօր քրիստոնյա ողջ աշխարհը տոնում է աղոթքով ու հայցով, որ մարդկության կյանքը լցվի Քրիստոսով նորոգությամբ, եւ ազգեր ու պետություններ կարողանան գտնել խաղաղության ու համերաշխ համակեցության ուղիները տագնապներով ու հակամարտություններով լեցուն ներկա աշխարհում:

Մեր ժողովուրդը 21-րդ դարում վերստին կրեց կորուստներ, ենթարկվեց նոր փորձությունների, որոնք, ցավոք, անկարող եղանք հաղթահարելու աշխարհաքաղաքական բարդ իրադարձությունների, ինչպես նաեւ առաքելապատվեր բարության, արդարության ու ճշմարտության ճանապարհից խոտորվելու պատճառով: Բարությունը մեզանում աղճատվեց չարության ու նենգության որոմներով, արդարությունն այլափոխվեց կողմնակալության ու հաշվեհարդարի դրսեւորումներով, ճշմարտությունը խեղվեց ու խաթարվեց ստով ու չարահնար գործողություններով: Նման արատները նաեւ պատճառ դարձան մեր ազգի մասնատման, ուժերի ջլատման ու պարտությունների, նաեւ կորուստների մեր սրբությունների եւ արժանապատվության: Այսպես Արցախը միայնակ մնաց իրեն պատած արհավիրքների օրերին: Արցախցի հայորդիք եղան հալածական հայրենի բնօրրանից, աստանդական եւ անօթեւան: Բայց Տերը, Ով Իր Ծննդյամբ փրկություն ու լույս բերեց խավարի մեջ, ցույց է տալիս, որ Աստծո հետ՝ ամեն նեղություն վերափոխվում է հաղթության, ամեն տառապանք՝ աստվածային հատուցման, ամեն դժվարություն՝ ուժի եւ զորության, եւ անգամ մահը՝ հավիտենության: Այս գիտակցությամբ ու հանձնառությամբ մեկտեղենք մեր ջանքերը փորձությունները հաղթահարելու համար եւ ավետարանչի խոսքերի ճշմարտությունը ցոլացնենք մեր կյանքում. *«Եվ լույսը խավարի մեջ լուսավորում է, եւ խավարը նրան չնվաճեց»* (Հովհ. 1.5):

Սիրելի բարեպաշտ զավակներ ի հայրենիս եւ ի սփյուռս, Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնին Հայրապետիս պատգամն է, որ մեր սրտերը չդարձնենք հուսահատության, տրտմության մութ ու ցուրտ անձավներ, այլ Քրիստոսի ներկայությամբ լուսավորված մսուրներ, որտեղ մանուկ Հիսուսին աստվածահաճո գործեր ընծայելու մղումն ու ձգտումն են թագավորում: Արդ, ապավինենք մարդեղացյալ Տիրոջը, ամուր մնանք հավատքի մեջ, ամենուր լինենք բարու, սիրո եւ ճշմարտի առաջամարտիկներ՝ հանուն արդար ու լուսավոր մեր կյանքի: Նախանձախնդիր լինենք հայրենի պետության հզորացմանը եւ համախմբվենք միասին՝ մեր ողջ ներուժով կասեցնելու համար Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումներն ու ոտնձգությունները: Վերացնենք արհեստականորեն մեր մեջ ստեղծված անջրպետները, ապրենք միմյանց հանդեպ սիրով, որ երկնային օրհնությամբ պայծառանան հայրենական ու ազգային մեր անդաստանները, ինչպես Ավետարանում է ասվում. *«Խավարի մեջ նստած ժողովուրդը մեծ լույս տեսավ. եւ լույս ծագեց նրանց վրա, որ նստում էին մահվան երկրի եւ ստվերների մեջ»* (Մատթ. 4.16):

Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության հուսաբեր խորհրդով քաջալեր՝ Հայրապետական Մեր հորդորն ենք բերում Արցախից տեղահանված Մեր զավակներին: Սիրելիներ, դուք անօրինակ հերոսական եւ անընկճելի ոգով ամենայն արժանապատվությամբ եւ անտրտունջ հաղթահարել եւ հաղթահարում եք ձեզ պատուհասած նեղությունները: Մեզ համար երբեք անցյալ չի դառնալու Արցախը, որը մենք շարունակելու ենք փայփայել մեր սրտում ու հոգում՝ ամենայն ջանք ի գործ դնելով արցախահայության իրավունքների պաշտպանության համար: Մնացեք լի հույսով՝ Աստված ձեզ բարիքներ եւ օրհնություններ պիտի պարգեւի ձեր կրած զրկանքների փոխարեն: Ձեր դժվարություններում դուք միայնակ չեք: Ձեզ հետ են ի հայրենիս եւ ի սփյուռս հավատավոր ձեր եղբայրներն ու քույրերը, ովքեր պիտի շարունակեն բոլոր հնարավոր միջոցներով սատար ու օգնական լինել ձեզ: Միասին մենք դուրս պիտի գանք առկա ծանր իրավիճակից եւ կառուցենք խաղաղ, բարօր ու ապահով ապագան մեր ժողովրդի ու հայրենիքի: Հավատում ենք մեր նոր կյանքի արշալույսին, քանզի խավարը չի կարող արգելք լինել արեւածագին: Առավոտյա լույսի հետ, Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետի հայցի համաձայն, մեր հոգիներում պիտի պայծառանա Աստծո իմանալի լույսը, եւ ինչպես Տերն է ասում մարգարեի շուրթերով՝ *«Արագ պիտի մոտենա Իմ արդարությունը, եւ Իմ փրկությունը պիտի ելնի ինչպես լույս»* (Եսայի 51.5):

Այս հուսառատությամբ ու հավատով, Սուրբ Ծննդյան ավետիսով եղբայրական Մեր ողջույնն ենք բերում մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալյանին, քույր եկեղեցիների հոգեւոր Պետերին՝ հայցելով Փրկչի օրհնությունն ու զորակցությունը եւ գահակալության արեւշատ ու արդյունալի տարիներ: Հայրապետական Մեր սերն ու բարյաց մաղթանքներն ենք հղում մեր Սուրբ Եկեղեցու հոգեւոր դասին եւ համայն հավատավոր Մեր ժողովրդին:

Սուրբ Ծննդյան շնորհաբեր այս օրը Մեր աղոթքն ենք վերառաքում առ Փրկիչ մեր Տերը: Ով մանկացյալ Հիսուս Քրիստոս, Որդի Աստծո, մեր փրկության համար մարմնացար եւ աշխարհ եկար ու մարդկության հանդեպ անսահման սիրովդ երկնառաք շնորհների լույսը ծագեցրիր բոլոր Քեզ հավատացողների հոգիներում: Խաղաղություն ու բարօրություն պարգեւիր աշխարհին ու մեր հայրենիքին: Ազատիր մեզ ամենայն չարից ու չարիքից, մխիթարություն շնորհիր պատերազմի արհավիրքներից ու ծանր կորուստներից խռովահույզ ու վշտակիր մեր սրտերին: Ներիր եւ թողություն շնորհիր մեզ, որպեսզի մեղքերն ու անկումները չփակեն մեր առջեւ ճանապարհը մեր տեսիլքների իրագործման եւ ակունքները Քո անբավ բարիքների եւ անսպառ ողորմության: Սուրբ Աջիդ խնամքի ներքո պահպանիր հայրենիքի սահմանները հսկող մեր քաջարի զինվորներին: Շուտափույթ վերադարձ պարգեւիր պատանդ պահվող գերյալ հայորդիներին, այլեւ անհայտ կորած մեր զավակներին: Երկնային երանական հանգստության եւ լուսեղեն օթեւանների արժանացրու պատերազմում զոհված մեր հերոս նահատակներին: Թող համայն հայության մեջ, ինչպես Սուրբ Ծննդյան մսուրում, շողարձակի Քո լուսավոր ներկայությունը, որպեսզի Քեզանով զորացյալ դիմակայենք բոլոր փորձություններին եւ ընթանանք դեպի հաղթական գալիքը մեր ժողովրդի՝ փառավորելով Քեզ Հոր եւ Սուրբ Հոգու հետ այժմ եւ միշտ եւ հավիտյանս. ամեն:

**Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,**
**Ձեզ եւ մեզ մեծ աւետիս:**

Հավարտ Սուրբ Պատարագի՝ կատարվեց Ջրօրհնեք, որի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը խաչով եւ Սրբալույս Մյուռոնով օրհնեց ջուրը: Խաչի այս տարվա կնքահայրն է ծագումով շուշեցի, մոսկվայաբնակ բժիշկ, ակադեմիկոս Արամայիս Քամալովը:

## Հագեցած տարի, նոր ծրագրեր

*սկիզբը՝ էջ 4*

Հաշվետու տարում անցկացվել է *«ՀՀ վարչապետի գավաթ»* խորագիրը կրող **5** մարզական մասսայական միջոցառում՝ սիրողական ֆուտբոլի հեծանվավազքի, ֆուտբոլավազքի, լողի, սեղանի թենիսի, դպրոցականների թիմային ֆուտբոլավազք մրցաշարերը, որոնց մասնակցել է **6496** մարդ: Իրականացվել են նաեւ Հայաստանի Հանրապետության վարչապետի հովանու ներքո ուժային կառույցների միջեւ բանակային խաղերը, այլ մարզական մասսայական միջոցառումներ: Ընդհանուր առմամբ նախարարության կողմից իրականացված մարզական մասսայական միջոցառումներին 2023 թվականին մասնակցել է **40228** մարդ:

Ամփոփելով վարչապետն անդրադարձել է Սփյուռքի դպրոցներին անհրաժեշտ դասագրքերի տրամադրմանը եւ ընդգծել, որ ըստ անհրաժեշտության՝ Կառավարությունը պատրաստ է ավելացնել ֆինանսական հատկացումներն այդ ուղղությամբ՝ առկա կարիքները բավարարելու նպատակով: Նիկոլ Փաշինյանը կարեւորել է տարբեր քաղաքներում եւ բնակավայրերում երիտասարդական կենտրոնների հիմնման աշխատանքները եւ նշել, որ ծրագիրը պետք է կրի շարունակական բնույթ: Վարչապետը, խոսելով մարզային եւ քաղաքային գրադարանների մասին, նշել է, որ անհրաժեշտ է դրանց կառավարումն արտապատվիրակել ոլորտում փորձ ունեցող լավագույն ընկերություններին՝ վերջիններիս շրջանում անցկացնելով համապատասխան մրցույթ: *«Ինչ-որ առումով՝ դրանք պետք է դառնան ինտելեկտուալ ժամանցի կենտրոններ: Մեր խնդիրն է՝ ապրեցնել այդ գրադարանները»,-* շեշտել է Կառավարության ղեկավարը:

Վարչապետը կարեւորել է նաեւ պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության ուղղությամբ հետեւողական աշխատանքները, ընդգծել թանգարանների արդյունավետ գործունեության, վերջիններիս սեփական եկամուտների ավելացման անհրաժեշտությունը:

Նիկոլ Փաշինյանը հետաքրքրվել է՝ արդյոք Կառավարությունն իր կողմից անհրաժեշտ աշխատանքներ է կատարում՝ Փարիզի Օլիմպիական խաղերի նախապատրաստության ուղղությամբ. փոխնախարար Կարեն Գիլոյանն ընդգծել է, որ պետությունն իր կողմից կատարում է բոլոր անհրաժեշտ քայլերը մարզիկների նախապատրաստական աշխատանքները լավագույնս կազմակերպելու համար: Վարչապետը, կարեւորելով մարզերում մարզական կենտրոնների խրախուսումը, անհրաժեշտ է համարել մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ ապահովել ֆիթնես կենտրոնների գործունեությունը եւ մշակել դրանց կառավարման նոր մոդել:

## Հայտարարություն

*«Դիլիջանի արվեստի պետական քոլեջ»* ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

**Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝**

*1) ՀՀ քաղաքացիությունը.*

*2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):*

**Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝**

*1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի անունով.*

*2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.*

*3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.*

*4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային եւ էլեկտրոնային տարբերակներով՝ վերոնշյալ կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան.*

*5) ինքնակենսագրություն*

*6) հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթը (առկայության դեպքում:*

Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ***2024 թ. հունվարի 17-ից մինչեւ փետրվարի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչեւ ժամը 17:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերից,*** Դիլիջանի արվեստի պետական քոլեջում, հասցեն՝ ՀՀ Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Կալինինի փող. 57:

Մրցույթը տեղի կունենա ***2024 թ. փետրվարի 15-ին՝ ժամը 13:00-ին,*** Դիլիջանի արվեստի պետական քոլեջում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0268) 2-74-86 հեռախոսահամարով: էլեկտրոնային հասցեն՝ pianoart@list.ru:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի *«Աբովյանի կրթահամալիր»* ՊՈԱԿ-ի նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնարանի անգլերենի (19 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մանկավարժի թափուր տեղի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշիչով սահմանված պահանջները. ուսուցիչը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում:

**Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝**

*1) դիմում (Ձեւ 1),*

*2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),*

*3) անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),*

*4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),*

*5) ինքնակենսագրություն (Ձեւ 4),*

*6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,*

